ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՇՈՎԻՆԻԶՄԻ ԵՎ ՌԱՍԻԶՄԻ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆ Է

Շահեն Աբրահամյան
փ.գ.թ., պրոֆեսոր
ԱրՊՀ

Բանալի բառեր՝ *ցեղասպանություն, պանիսլամիզմ, պանթուրքիզմ, պանգերմանիզմ, քրիստոնեական հովանավորություն, էթնոցենտրիզմ, էքստրեմիստական ռեժիմ, ռեակցիոն շովինիզմ, թուրքական ռասիզմ, բոլշևիկյան իշխանություն*

Ցեղասպանությունը մարդկային հասարակության պատմության ամենախոցելի հասարակական երևույթներից մեկն է: Հանրագիտական բառարանում ցեղասպանությունը բնութագրվում է որպես մարդկության հանդեպ գործադրված ամենադաժան հանցագործություններից մեկը՝ բնակչության ամբողջական կամ առանձին խմբերի ոչնչացում՝ ռասայական, ազգային, էթնիկական կամ կրոնական, ինչպես նաև գիտակցաբար կանխագծված պայմանների ստեղծում՝ մարդկանց խմբերի լրիվ կամ մասնակի ֆիզիկապես ոչնչացման համար:[1] Ցեղասպանության ամենավայրագ միջոցը էթնոսի ֆիզիկական ոչնչացումն է: Ցեղասպանության միջոց է համարվում նաև կենսական եղանակով մայրերին պտղազրկումն ու բռնի միջոցներով դավանափոխությունն ու ազգուրացությունը: Ցեղասպանության եղանակով դարերի ընթացքում բազում էթնոսներ ու ժողովուրդներ հեռացել են մարդկության պատմությունից: Ցեղասպանության ծագման ու կայացման պատճառահետևանքային կապերի մասին հասարակագիտության մեջ արտահայտվում են տարբեր մոտեցումներ, սակայն բոլոր մոտեցումներում իշխող կարծիքն այն է, որ երևույթը վերջին հաշվով, պայմանավորվում է ռեակցիոն ազգայնամոլության դրսևորումով: Պրոֆեսոր, ազգագրագետ Այրաթ Ակլաևի կարծիքով էթնիկ խմբի նկատմամբ <<թշնամու կերպարի>> կարծրատիպ վերաբերմունք է ստեղծվում, խեղաթյուրված հատկանիշներ են վերագրվում հակառակ կողմին, համոզելով, որ այդ հատկանիշները հատուկ են ողջ խմբիը, Ստեղծելով <<թշնամու կերպարը>>՝ այդ կերպարին վերագրվում է այն, ինչը վերագրող կողմն է ցանկանում: Միակ մեղքը, որով մեղադրվում է ողջ խումբն այն է, որ նա պատկանում է տվյալ էթնոսին:[2] Ամերիկյան քաղաքագետ Էնտոնի Սմիթը ցեղասպանությունը համարում է էթնոցենտրիզմի գաղափարախոսության իրողություն, այսինքն՝ հայացքների համակարգ, որը կենսական բոլոր երևույթները դիտարկում է իր էթնիկական պատկանելիության պրիզմայով, անվանելով այն էտալոն՝ իր ապրելակերպը գերադասելով

[1] Советский энциклопедический словарь. Москва, 1989, с. 290.
[2] Аклаев А., Этнополитическая конфликтология.Москва,2008,с.295-296.

մյուսներից:[1] Ավստրիական նշանավոր հոգեբան-փիլիսոփա Զ.Ֆրեյդը ռեակցիոն նացիոնալիզմի դրսևորումը պայմանավորում է հոգեկանի արտահայտությամբ: Հոգեկան պրոցեսը վերածվում է սոցիալական գործունեություն կատարելու միջոցի: Մարդու հոգեկանի մեջ առաջանում է մեծ լարվածություն՝ վերածվելով մեծ թշնամանքի և ատելության:[2]

Երկրորդ աշխարհամարտից հետո ստեղծված միջազգային ամենահեղինակավոր կազմակերպության՝ ՄԱԿ-ի Գերագույն խորհրդի նստաշրջանի 1946թ. դեկտեմբերի 11-ին ցեղասպանության մասին ընդունած բանաձևում ասված է, որ «ցեղասպանություն» նշանակում է մերժել մարդկային խմբերի ապրելու իրավունքը: Ցեղասպանությունը համարվում է հանցագործություն և դատապարտվում է քաղաքակիրթ աշխարհի կողմից, անկախ նրանից, թե ինչպիսի անհատների կողմից է կազմակերպվել և ինչպիսի մոտիվներով է կազմակերպվել: Իսկ 1948թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի Գլխավոր խորհուրդը հաստատել է <<Ցեղասպանության հանցագործության նախազգուշացման և պատժման մասին>> կոնցեպցիան, որը, հենվելով 1946թ. ընդունած բանաձևի վրա, ցեղասպանությունը համարվում է այնպիսի գործողություն, որը խախտում է միջազգային իրավունքի բոլոր նորմերը և հակասում է ՄԱԿ-ի ոգուն ու նպատակներին:[3] Սակայն ամենահեղինակավոր միջազգային կազմակերպության հայտարարություններով չեն վերացվել ցեղասպանության տարատեսակների դրսևորումները աշխարհի տարբեր տարածաշրջաններում, որոնցից ամենաողբերգականները կարելի է համարել Կոմբոջայում 1970-ականներին ծայրահեղ ձախ էքստրիմիստական ռեժիմի պարագլուխ Պոլ Պոտի՝ սեփական ժողովրդի նկատմամբ կիրառած ֆիզիկական բնաջնջումը, որին զոհ դարձավ մոտ մեկուկես միլիոն մարդ: Էթնիկական հողի վրա միլիոնավոր մարդիկ ցեղասպանության զոհեր դարձան Սուդանի և Շրի Լանկայի հանրապետություններում:

20-րդ դարի առաջին մասշտաբային ցեղասպանություն է ճանաչված 1915-1923 թվականներին թուրքական շովինիզմի և ռասիզմի՝ պետականորեն ծրագրած ու կազմակերպած հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջումն իր դարավոր հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում: Հայ ազգի բնաջնջման պետական քաղաքականությունը մշակվել է 19-րդ դարի վերջերին թուրքական ազգային բուրժուազիայի կազմավորումով, որը առաջադրվել է շովինիզմի, պանիսլամիզմի, ռասիզմի գաղափարախոսությամբ: Պանիսլամիզմը կրոնա-քաղաքական գաղափարախոսություն է, որի հիմքում դրվում է աշխարհի մուսուլմանների համախմբման ու միավորման անհրաժեշտությունը մեկ մահմեդական պետության մեջ: Այն ձևավորվել է 19-րդ դարի վերջին: Օսմանական Թուրքիայում պանիսլամիզմը օգտագործվել է որպես ռեակցիոն

[1] Мнацаканян М., Нации и национализм. Москва, 2004, с. 216.
[2] Фрейд З., Психология, религия, культура. Москва, 1991, с. 108.
[3] Германские источники о геноциде армян, Ереван, 1991, с. 54-55.

գաղափարախոսություն:[1] Պանիսլամիստական գաղափարախոսական սկզբունքների հիման վրա 20-րդ դարի սկզբներին ձևավորվեց պանթուրքիզմը: Այն թուրքական բուրժուա-կալվածատիրական վերնախավի ռեակցիոն շովինիստական դոկտրինա է, որը խնդիր է դնում միավորել թուրքալեզու էթնոսներին Թուրքիայի իշխանության ներքո:[2]

Պանիսլամիզմի և պանթուրքիզմի ռազմավարության գործընթացում թուրքական իշխանությունների համար ամենալուրջ խոչընդոտը հայկական հարցի լուծման խնդիրն էր: Հայկական մշակութահոգեբանական արժեքները անհամատեղելի էին թուրքականի հետ: Թուրք իշխանավորների ըմբռնումով հայերը իրավունք չունեին ապրելու թուրքական կայսրությունում, քանի որ ընդունակ չէին յուրացնելու <<քաղաքակրթության առաջին ջահակիրների>> ստեղծած արժեքները: Ուստի <<քաղաքակիրթ թուրքերի>> հիմնախնդիրը դարձավ հայկական ցեղի վերացումը: 1908թ. բուրժուա-դեմոկրատական հեղափոխության քողի տակ Սուլթան Համիդի արյունոտ ռեժիմին փոխարինած երիտթուրքերը ոչ միայն չանջատվեցին համիդյան ֆեոդալական տիպի տոտալիտարիզմից, այլև հայկական ցեղասպանության իրագործումը դարձրին պետական իշխանության ռազմավարության գերխնդիրներից մեկը: Գերմանացի արևելագետ Մարկվարտն ընդգծել է, որ թուրքական իշխանության նպատակը բխել է Աբդուլ Համիդի հանձնիբայյան բառերից, որը հռչակել է. <<Երբ չլինեն հայերը, չի լինի նաև հայկական հարցը>>:[3] Աբդուլ Համիդի պատվիրանը կատարեցին երիտթուրքերը: 1915թ. օգոստոսի 5-ին Թալեաթ փաշան Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպանի պաշտոնակատար Լանգենբուրգի հետ ունեցած զրույցի ժամանակ ասել է. <<Հայկական հարց այլևս չկա, որովհետև օսմանական կայսրությունում հայերը ոչնչացված են>>:[4]

Հայկական ցեղասպանության հիմնահարցը լայնամասշտաբ տեղ է գրավում հայ հասարակական-քաղաքական մտքի նորագույն պատմության մեջ: Այդ հիմնահարցին են նվիրվել նաև արտերկրի քաղաքական-հասարակական նշանավոր գործիչների մենագրություններ, հոդվածներ, հուշագրություններ: Մեծարժեք ուսումնասիրություններ են հրատարակել Ջ.Կիրակոսյանը, Ստ.Ստեփանյանը, Ա.Համաբարյանը, Հ.Դեմոյանը, գերմանացի հասարակական գործիչներ Է.Վերները, Ի.Լեպսիուսը և ուրիշներ: Ներկայումս, երբ հարյուրամյա անցյալից անդրադառնում ենք Հայոց ցեղասպանությանը, բազմաթիվ մտորումների հետ մեկտեղ հարց է առաջանում նաև, թե Եվրամիության հետ ինտեգրվելու ցանկություն հայտնող Թուրքիան և կայսերամոլ Գերմանիան, որոնք առաջին աշխարհամարտի տարիներին անմիջական առնչություն են ունեցել հայոց ողբերգության հետ, ինչպիսի հայացքներ ունեն և անչպես են

[1] Советский энциклопедический словарь,с. 974.
[2] Там же, с. 976.
[3] Германские источники о геноциде армян, с. 7.
[4] Там же, с. 23.

տրամադրված այժմ կառուցվող երկու հայկական անկախ պետությունների հանդեպ: Ժամանակակից թուրքական քաղաքական էլիտայի՝ Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի գաղափարախոսությամբ առաջնորդվող ազգայնամոլական խումբը, իր հայացքն ուղղելով հետխորհրդային կասպիականի ավազանին ու Միջին Ասիայի թուրքալեզու ժողովուրդներին, նպատակ ունի կատարել պանթուրքիզմի պատգամը՝ Թուրքիայի գլխավորությամբ ստեղծել թուրքական կայսրություն:[1] Սակայն այս <<սրբազան>> նպատակի իրականացման ճանապարհի տատասկոտ մասը անցնում է հայկական երկու պետությունների տարածքով: Ուստի արդի քեմալական Թուրքիայի նպատակային ծրագրում շարունակում է իշխել հայ ազգի վերացման գաղափարը: Նպատակահարմար է այստեղ մեջբերել Հայոց ցեղասպանության նկատմամբ Մուստաֆա Քեմալին բնորոշող վարմունքի մասին մի դրվագ: 1917թ. սկզբներին Գերմանիա ժամանած թուրքական զահի ժառանգորդ Վահիդեդդինի գլխավորած պատվիրակության կազմում էր նաև այն ժամանակ թուրքական բանակի գեներալ Մուստաֆա Քեմալը: Վիլհելմ կայսրը մեծ շուքով է ընդունել թուրքական պատվիրակությանը: Եվ երբ ընդունելության ժամանակ գերմանական ռազմական կոմիսարներից մեկը օսմանական կառավարությանը հանդիմանել է հայերի կոտորածների համար, Քեմալը անտակտ ընդհատել է կոմիսարին, ասելով. <<Մենք եկել ենք այստեղ քննարկելու գերմանական բանակի խնդիրները և ոչ թե հայկական բնակչության վիճակը>>:[2]

Հայոց ցեղասպանության մասին հրատարակված գերմանական աղբյուրների երկու հատորներում բերված փաստերը միանշանակ վկայում են կայսերական Գերմանիայի կողմից երիտթուրքերի հայատյաց քաղաքականության նկատմամբ ոչ միայն անտարբեր, այլ փաստորեն հովանավորող դիրքի մասին: Այդպիսի դիրքորոշման գաղափարական հիմք է հանդիսացել պանգերմանիզմը, որը ձևավորվել է պանիսլամիզմի հետ մեկտեղ, պատմական նույն ժամանակահատվածում՝ 19-րդ դարի վերջերին: Պանգերմանիզմը ռեակցիոն քաղաքական դոկտրինա էր գերմանական իմպերիալիզմի համաշխարհային տիրապետության ստեղծման մասին: Պանգերմանիզմին հատուկ է մոլեգին նացիոնալիզմը, շովինիզմը, ռասիզմը:[3] Պանիսլամիզմը և պանգերմանիզմը նույն ռասամոլության կրողներ են և հանդիսանում են ֆաշիզմի նախորդները: Հատկանշական է հետևյալ փաստարկումը. 1895-96 թվականներին Գերմանիայի դեսպան Զաուրմը Կոստանդնուպոլսից Վիլհելմ 2-րդ կայսրին զեկույցներ է ներկայացրել Թուրքիայում կազմակերպված հայկական ջարդերի մասին: Կեղծ ու երեսպաշտ Կայզերը իբր վրդովվել է ու հայտարարել, որ հայերի կոտորածը ամոթ է քրիստոնյա Եվրոպայի համար:[4] Բայց այդ հայտարարությունը իրական

[1] Мухаев Р., Геополитика, Москва, 2013, с. 753.
[2] Ушаков А., Феномен Ататюрка, Москва, 2002, с. 130.
[3] Советский энциклопедический словарь, с. 974.
[4] Германские источники о геноциде армян, с. 9-10.

դեմքը ծածկելու քող էր միայն: Կայզերի համար հայերի ողբերգությունը ոչինչ չարժեր: Քրիստոնեական Եվրոպայի այդ տարիների իրական դեմքը տեսանելի է գերմանական հումանիստ և հասարակական գործիչ Իոհաննես Լեպսիուսի <<Հայ ժողովրդի կործանումը>> աշխատությունում: Այստեղ հումանիստ մտածողը ընդգծել է, որ հայկական հարցը եվրոպական դիվանագիտության ծնունդն էր: Դիվանագիտական շախմատի վրա հայը ծառայել է որպես հետևակ, որը կարելի էր առաջ տալ և զոհաբերել: <<Քրիստոնեական հովանավորություն>> հումանսիտական սկզբունքը միայն դիմակ էր:[1] Իսկ Մեծ Բրիտանիայի վարչապետ Լլոյդ Ջորջը /1916-22թթ./ իր մեմուարներում գրել է. <<Հայաստանը մեր կառուցած հանդիսահաղթական զոհասեղանի զոհաբերությունը դարձավ>>:[2] Հայոց ցեղասպանության մասին անպատկառ և լկտիաբար է արտահայտվել գերմանական ֆաշիզմի լիդեր Հիտլերը: 1939թ. օգոստոսին ֆաշիստական ռազմական վերնախավի խորհրդակցությունում Ադոլֆ Հիտլերը ասել է. << Ես կարգադրել եմ իմ մահաբեր ջոկատներին, որպեսզի նրանք առանց խնայելու ոչնչացնեն լեհական ցեղերի և նրանց լեզվով խոսող երեխաներին, կանանց ու տղամարդկանց: Միայն այդ միջոցով մենք կարող ենք ձեռք բերել մեր կենսական ասպարեզը: Վերջին հաշվով՝ ո՞վ է այսօր հիշում հայերի ոչնչացումը:>>[3] Նույն Հիտլերը 1943թ. հանձնարարել է Մարտին Բորմանին կազմակերպել հայ ժողովրդի դահիճ Թալեաթի աճյունի տեղափոխումը Բեռլինից Ստամբուլ:[4] Արդի աշխարհաքաղաքականության գործընթացում որոշիչ դիրքի ձգտող Գերմանիայի լիդեր Անգելա Մերկելը 2015թ. փետրվարին Ադրբեջանի նախագահ Ի.Ալիևի հետ հանդիպման ժամանակ պատրաստակամություն է հայտնել միջնորդելու ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության գործին: Ըստ երևույթին, Անգելա Մերկելը ցանկություն ունի իր նախնիների՝ <<թուրքերի հետ եղբայրության>> սկզբունքով մասնակից դառնալ ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործին:

Ի տարբերություն Արևմուտքի Մեծ տերությունների <<քրիստոնեական հովանավորության>>, Ռուսաստանի կողմից հայոց ողբերգության և հայ ժողովրդի պատմական բախտի նկատմամբ վերաբերմունքը դրսևորվել է գործնական, բարեկամական սկզբունքով: Մեր կարծիքով անժխտելի է այն, որ ներկայիս երկու հայկական պետությունների անվտանգության ապահովման գործում ծանրակշիռ է Ռուսաստանի դերը: Սակայն անժխտելի է նաև այն, որ Ռուսաստանի հարավի ու նրա սահմանների անվտանգության ապահովման գործում միակ հուսալի դաշնակիցը Հայաստանն է և ողջ հայ ժողովուրդը: Չի կարելի նաև չընդգծել, որ խորհրդային իշխանության կողմից հայկական հարցը պարբերաբար ստորադասվել է ռուս-թուրքական շահական հարաբերություններին: Այս կարծիքը փորձենք հիմնավորել մի քանի

[1] Там же, с. 6.
[2] Ллойд Джордж Д., Правда о мирных договорах, Т. 2, Москва, 1957, с. 390.
[3] Германские источники о геноциде армян, с. 54.
[4] Киракосян Дж., Младотурки перед судом истории, Ереван, 1989, с. 11.

փաստերով: 1919թ. ամռանը բոլշևիկների իշխանության պաշտոնական ներկայացուցիչը հանդիպել է Մուստաֆա Քեմալի հետ: Քեմալը այդ հանդիպումը դիվանագիտորեն օգտագործել է Լենինից զենք ստանալու նպատակով: Հաջորդ տարին Քեմալը Ռուսաստանից ստացել է իր ուզած զենքը:[1] Հազիվ թե Լենինը չիմանար, թե ում դեմ է օգտագործելու այդ զենքը Քեմալ փաշան: 1921թ. մարտին Մոսկվայում կնքված ռուս-թուրքական պայմանագրով թուրքերին են հանձնվել Կարսի, Արդահանի, Արտվինի հայկական մարզերը, որոնք մինչև առաջին աշխարհամարտի սկիզբը գտնվում էին Արևելյան Հայաստանի կազմում՝ Ռուսաստանի իշխանության ներքո: 1933թ. նոյեմբերին Թուրքիայում հանդիսավորությամբ նշվել է Աթաթուրքի նախագահության տասնամյա հոբելյանը: Նույն թվականի նոյեմբերի 5-ին <<Խորհրդային Ղարաբաղ>> թերթը գրել է, որ մարշալ Վորոշիլովը մեկնելով Անկարա՝ Քեմալ փաշային իբրև նվեր բերել էր խորհրդային երեք ինքնաթիռ: Տոնահանդեսի ժամանակ Քեմալ փաշայի կողքին կանգնել էր Վորոշիլովը: Նա գոհունակությամբ ընդունեց Քեմալ փաշայի արտահայտած այն գաղափարը, որ թուրքական հանրապետության հիմքում դրած ամենամեծ գործը թուրք ժողովրդի հերոսությունն ու նրա կուլտուրան է:[2]

Հաջող են ընթանում ռուս-թուրքական հարաբերությունները ներկայումս: Իսկ մենք՝ հայերս, հավատարիմ մնալով հայ-ռուսական ռազմավարական դաշինքին, նաև գտնում ենք, որ ցեղասպանությունը ամենացավոտ էջեր է գրանցել մեր պատմության մեջ: Բոլոր դեպքերում մենք ենք մեր պատմության տերն ու կրողը և գալիքի կերտողը: Լինենք զգոն, քիչ սայթաքենք, կոփենք հավատ:

Ամփոփում

Հոդվածում դատապարտվում է երիտթուրքերի՝ ֆեոդալական տոտալի-տարիզմի տիպի իշխանությունների կողմից հայ ժողովրդի դեմ կատարած ոճրագործությունը:

Հեղինակի կարծիքով հայկական ցեղասպանությունը կատարվել է Թուրքիայի դաշնակից կայսերական Գերմանիայի անմիջական հովանավորությամբ՝ պանիսլամիզմի և ռասիզմի գաղափարախոսական սկզբունքներով և պանթուր-քիզմի ու պանգերմանիզմի ռազմավարության նպատակային ձգտումներով:

Այսօր առկա է պանթուրքիզմի նպատակախնդիրը: Այն արտաքին գլխավոր վտանգ է հանդիսանում հայկական երկու պետությունների համար:

The Armenian Genocide is the Real Policy of the Turkish Chauvinizm and Racism

Shahen Abrahamyan

Summary

[1] Ушаков А..Феномен Ататюрка, с.160-161.

[2] “Խորհրդային Ղարաբա” թերթ, 5 նոյեմբերի.1933:

Key words: *genocide, pan-islamism, pan-Turkism, pan-Germanism, patronage of Christians, ethnocentrism, extremist regime, reactionary chauvinism, Turkish racism, the Bolshevik government*

The article investigates and condemns the policy of the Young Turks as representatives of the feudal, totalitarian government and their crime against the Armenian people. According to the author the Armenian genociade was carried out with the tacit agreement and the direct patronage of the German Empire allied with Turkey. And all this happened under the influence of racist and pan-islamist, pan-Turkic ideology, coupled with Pan-Germanism in the implementation of military strategic aspirations.

Nowadays pan-Turkic goals are also implemented. They pose a major external threat to the two Armenian states.

Геноцид армян –реальная политика турецкого шовинизма и расизма

Шаген Абрамян

Резюме

Ключевые слова: *геноцид, панисламизм, пантюркизм, пангерманизм, покровительство христиан, этноцентризм, экстремистский режим, реакционный шовинизм, турецкий расизм, большевистская власть*

В статье исследуется и осуждается политика младотурок как представителей феодального, тоталитарного типа власти и их преступление против армянского народа. По мнению автора, геноцид армян осуществлялся при молчаливом согласии и непосредственном покровительстве кайзеровской Германии и союзной Турции. И все происходило под воздействием расистских и панисламистских, пантюркитских идеологий в купе с пангерманизмом при реализации военных стратегических устремлений.

В настоящее время также по-прежнему ставятся пантюркистские цели, которые представляют главную угрозу для двух армянских государств.